

կանաւ կը գրէ առ Հ. Աթանաս վ. Սարաֆեան, Մեծաւոր (Արքայ) Անտոնեան Միաբանութեան ի Հռոմ (Գիւ. Անտ. ի Կ.Պ.), թէ ի Հռոմ կաթողիկէ Հայոց Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյ հոգետունը ընակած է ժամանակ մը, ուր նոյն միջոցին կաթողիկէութեան դարձած քանի մը հայ եպիսկոպոսներ կային. ինքն ասոնց բնաւորութենէն շատ նեղուած՝ փոխադրուած է 1789 Յունուարին Անքոնա՝ կաթողիկէ Հայոց հոգետունը: Այս տեղ եկած է Հռոմէն 1789 Ապր. 16ին Կ.Պոլսոյ Հայոց երբեմն Պատրիարք Գրիգոր վ. Պասմաճեան (ինքնագիր նամակ Գրիգոր Պատրիարքի, գրուած 14 Յունիս 1789, Գիւ. Մխիթ. ի վիեննա): Գրիգոր Պատրիարք նոյն տարին թրիեստ փոխադրուած է (տ. կենսագրութիւն Ս. Արք. Սարաֆեանի, վիեննա 1908, էջ 349—358), կարապետ Արքեպ. ալ վենետիկ մեկնած՝ եւ քաղաքին մէջ առանձին սենեակ վարձած է:

Հ. Աւգերեան յիշեալ ժամանակագրութեան մէջ շատ հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ անոր մասին: Այն տեղ կիրակի եւ Տօն օրեր Մխիթ. վանքը կ'երթար եւ անոնց քով նաեւ գիւղ կը բնակէր. Հ. Աւգերեան զինքը կը նկարագրէ՝ այր քաղցր եւ առաքինի, քաղցրաձայն, փառացի. թաւ մօրուքն մինչեւ գօտին կը հասնէր, այնպէս որ ծոցի գրպանէն բան մը հանելու համար՝ ստիպուած էր միւս ձեռօք մօրուքը մէկգի առնուլ. միայն կաթողիկէութեանը համար փախած էր, եւ Հռոմէն ըն-